

**«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ՔԱՐՏԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ***Ընդունվել է Բանկի Տնօրինության 17.06.2020թ. թիվ 01/16/20 որոշմամբ,**գործող խմբագրությունը՝ 07.07.2022թ. թիվ 02/86/22 որոշմամբ և ուժի մեջ է ներքևում նշված ամսաթվից:***1. Հասկացություններ և սահմանումներ**

«Ամերիաբանկ» ՓԲԸ քարտերի ապահովագրության պայմաններ»-ում (այսուհետ՝ Պայմաններ) կիրառվող հասկացություններն ունեն սույն Պայմանների «Ընդհանուր դրույթներ»-ում և ստորև ներկայացված իմաստը և նշանակությունը:

**Ապահովագրության պայմանագիր՝** «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ կամ Ապահովադիր) և «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ (այսուհետ՝ Ապահովագրող կամ Ապահովագրական ընկերություն) միջև կնքված Քարտերի գեղծարարության ապահովագրության պայմանագիր:

**Քարտ՝** նշանակում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ-ում թողարկված՝ «Ամերիաբանկ ՓԲԸ Քարտերի սակագներ»<sup>1</sup>-ով սահմանված դեբետային քարտ՝ օվերդրաֆտի հնարավորությամբ և վարկային քարտ՝ արտոնյալ ժամկետով՝ բացառությամբ «ArCa» քարտատեսակների և դեբետային և վարկային քարտերին կից տրամադրվող հավելյալ քարտերի: **Քարտային հաշիվ՝** նշանակում է Քարտապանի անունով բացված և «Ամերիաբանկ» ՓԲԸ վճարային քարտերի սպասարկման պայմաններ և օգտագործման կանոններ»-ի<sup>4</sup> և «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ»-ի<sup>2</sup> համաձայն վարվող բանկային հաշիվ, որը կցվում է Քարտին:

**Քարտապան(ներ)՝** «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի բոլոր այն ֆիզիկական անձ(ինք), ում՝ Բանկի կողմից տրամադրված Քարտ/եր/ը սույն Պայմանների համաձայն ենթակա է/են ապահովագրման:

**Ընդհանուր տարեկան սահմանաչափ** նշանակում է այն առավելագույն ապահովագրական գումարը, որն Ապահովագրողը պարտավորվում է վճարել/հատուցել յուրաքանչյուր Քարտապանին յուրաքանչյուր քարտի գծով ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում պատահար կամ պատահարներ տեղի ունենալու դեպքում:

**Մեկ պատահարի գծով ապահովագրական գումար** նշանակում է սույն Պայմանների համաձայն մեկ ապահովագրված քարտի գծով մեկ ապահովագրական պատահարի դիմաց վճարման/հատուցման ենթակա առավելագույն գումար:

**Կորոպուտ** նշանակում է Քարտապանի գույքի ապօրինի յուրացում կամ յուրացման փորձ որևէ անձի կամ անձանց խմբի կողմից, որոնք ապօրինի կերպով մուտք են գործել Քարտապանի բնակության վայր, ուժի կամ բռնության կիրառմամբ, ինչի մասին առկա են ակնհայտ ապացույցներ:

**Բիզնես** նշանակում է (i) առևտրային գործունեություն, մասնագիտություն կամ աշխատանք, այդ թվում ամբողջ դրույքով, ոչ ամբողջական դրույքով կամ ժամանակ առ ժամանակ կատարվող աշխատանք, կամ (ii) ցանկացած այլ օրինական գործունեություն, որն իրականացվում է դրամական կամ այլ վարձատրության դիմաց:

**Վճարումներ** նշանակում է սույն Պայմաններով և/կամ Ապահովագրության պայմանագրով սահմանված դեպքերում Ապահովագրողի կողմից կատարման ենթակա վճար:

<sup>1</sup> «Ամերիաբանկ» ՓԲԸ Քարտերի սակագներ» / 11RBD PL 72-56/, ընդունվել է Բանկի Տնօրինության 29.07.2015թ. թիվ 02/20/15 որոշմամբ. <https://ameriabank.am/useful-links>:

<sup>2</sup> «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ» /11RBD RL 72-01-01/, ընդունվել է Բանկի Տնօրինության 04.02.2015թ. թիվ 02/03/15 որոշմամբ. <https://ameriabank.am/useful-links>:

**Ընտանիքի անդամ** նշանակում է Քարտապանի օրինական ամուսինը կամ Քարտապանի հետ բնակվող կամ համատեղ տնտեսություն վարող անձինք, այդ թվում ծնողները, տատը, պապը, 18 տարին լրացած թոռը, 18 տարին լրացած որդին/դուստրը և վերջինիս ամուսինը, 18 տարին լրացած եղբայրը/քույրը, վերջինիս ամուսինը և նրանց՝ 18 տարին լրացած երեխաները, վերջիններիս ամուսինը/կինը և նրանց՝ 18 տարին լրացած երեխաները, ամուսնու ծնողները և 18 տարին լրացած երեխաները:

**Կորած քարտ** նշանակում է (i) որևէ վայրում մոռացված լինելու կամ (ii) անհասանելի վայրում գտնվելու հետևանքով Քարտապանների տիրապետության ներքո այլևս չգտնվող քարտ:

**Գողացված քարտ** նշանակում է քարտ, որը հափշտակվել է բռնությամբ և/կամ սպառնալիքով կամ անհետացել է որոշակի վայրից այնպիսի հանգամանքներում, որոնք վկայում են գողության հավանականության մասին:

**Գողություն** նշանակում է Քարտապանների ունեցվածքի անօրինական հափշտակում որևէ անձի կամ անձանց կողմից բռնություն կամ բռնության սպառնալիք կիրառելու միջոցով, ֆիզիկական վնաս պատճառելով կամ նման վնաս պատճառելու սպառնալիք ուղղելով Քարտապանին, Քարտապանի ամուսնուն/համատեղ բնակվող անձին և/կամ 21 տարեկանը չլրացած երեխաներին:

**Ահաբեկչական գործողություն** նշանակում է անձի կամ նրա ունեցվածքի հանդեպ ուժի կամ բռնության գործածում կամ գործածման սպառնալիք կամ մարդու կյանքի կամ ունեցվածքի համար վտանգավոր արարքի կատարում կամ որևէ այնպիսի գործողության կատարում, որը խոչընդոտում կամ խափանում է որևէ էլեկտրոնային կամ կապի համակարգի աշխատանքը և արվում է որևէ անձի կամ անձանց խմբի կողմից, անկախ նրանից՝ նրանք գործում են որևէ կազմակերպության, պետության, քաղաքական կամ ռազմական իշխանությունների անունից կամ դրանց հետ փոխկապակցված, եթե նման գործողությունները նպատակ ունեն ահաբեկել, որևէ կերպով հարկադրել կամ վնաս հասցնել կառավարությանը, քաղաքացիական բնակչությանը կամ դրա որևէ հատվածին կամ խափանել տնտեսության ցանկացած ոլորտ: «Ահաբեկչություն» հասկացությունը ներառում է նաև ցանկացած գործողություն, որը տվյալ երկրի կառավարության կողմից որակվում կամ ճանաչվում է որպես ահաբեկչական գործողություն:

**Հափշտակում** նշանակում է Գողության կամ Կողոպուտի արդյունքում, շահ ստանալու մտադրությամբ Քարտապանների տնօրինման ներքո գտնվող գույքի անօրինական հափշտակում առանց նրանց համաձայնության:

**Պատերազմ** նշանակում է ցանկացած հայտարարված կամ չհայտարարված պատերազմ կամ ցանկացած պատերազմական գործողություն, այդ թվում՝ ցանկացած ինքնիշխան ազգի կողմից ռազմական ուժի օգտագործում՝ տնտեսական, աշխարհագրական, ազգայնական, քաղաքական, ռասայական, կրոնական կամ այլ նպատակների համար:

**ԱԳՄ** նշանակում է ավտոմատ գանձման մեքենա կամ ցանկացած այլ ավտոմատ մեքենա, որի միջոցով իրականացվում են ֆինանսական գործառնություններ՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

**Ապահովագրական պատահարներ**՝ համաձայն սույն Պայմանների 2-րդ, 3-րդ և 4-րդ գլխում ներկայացված պայմանների:

**Գրավոր**՝ Քարտապանի կողմից ստորագրված կամ Բանկի և Քարտապանի միջև համաձայնեցված՝ Քարտապանի ստորագրությանը հավասարեցված այլ եղանակով (ինտերնետ/մոբայլ բանկինգ, հեռախոս-բանկ և այլն) հավաստագրված կամ Բանկի համար ընդունելի և նույնականացման հնարավորություն ապահովող էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով հանձնարարարության կամ տեղեկատվության ներկայացման եղանակ:

## 2. Ընդհանուր դրույթներ

2.1. Սույն Պայմանները մշակվել են հիմք ընդունելով Ապահովագրության պայմանագիրը և գործում են վերջինիս գործողության ընթացքում<sup>3</sup>:

2.2. Սույն Պայմանների իմաստով Ապահովագրված քարտ (այսուհետ նաև քարտ) են համարվում այն

2.2.1. Քարտերը, որոնք ունեն վարկային գիծ կամ օվերդրաֆտ կամ

<sup>3</sup> Եթե Բանկի և Ապահովագրական ընկերության միջև Ապահովագրության պայմանագրի վերակնքման շրջանակում սույն Պայմանները չեն վերանայվում, ապա Պայմանները համարվում են գործող նաև վերակնքված Ապահովագրության պայմանագրի ներքո:

2.2.2. Քարտերը, որոնք չունեն վարկային գիծ կամ օվերդրաֆտ և որոնց մասով առկա է տվյալ Քարտի ապահովագրության վերաբերյալ Քարտապանի համաձայնությունը:

2.3. Ապահովագրված քարտի ապահովագրման հիմնական պայմանները ներկայացված են ստորև աղյուսակում.

2.3.1. Ապահովագրական գումար	<p>Մեկ քարտի գծով`</p> <ul style="list-style-type: none"> <li>• EUR 2,000 յուրաքանչյուր դեպքի համար,</li> <li>• EUR 5,000 տարեկան բոլոր դեպքերի համար միասին:</li> </ul>
2.3.2. Ոչ պայմանական չհատուցվող գումար	Չի կիրառվում
2.3.3. Ապահովագրական ծածկույթ	<p>Սույն Պայմանների շրջանակներում Ապահովագրական ընկերությունը Քարտապաններին կփոխհատուցի կրած վնասները մեկ պատահարի գծով սահմանաչափի և ընդհանուր տարեկան սահմանաչափի շրջանակներում` ստորև նկարագրված դեպքերում.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Եթե Քարտապանի Ապահովագրված քարտը կորել կամ գողացվել է, Ապահովագրական ընկերությունը Քարտապանին կփոխհատուցի կորսված կամ գողացված Ապահովագրված քարտի հետ կապված չարտոնված գանձումները (ծախսագրումները) Քարտապանի կողմից Բանկին պատահարի մասին «Ամերիաբանկ» ՓԲԸ Վճարային քարտերի սպասարկման պայմաններ և օգտագործման կանոններ»<sup>4</sup> - ով սահմանված կարգով և եղանակներում հայտնելու պահին նախորդող 48 ժամ տևողությամբ ժամանակահատվածի համար:</li> <li>2. Եթե Քարտապանի Ապահովագրված քարտը գտնվում է Քարտապանի տիրապետման ներքո և Քարտապանի քարտային/վարկային հաշվով իրականացվել են չարտոնված գանձումներ (ծախսագրումներ) ստորև նշված եղանակներից որևիցե մեկով կամ մի քանիսի համադրությամբ` օգտագործելով Ապահովագրված քարտի տվյալները. <ul style="list-style-type: none"> <li>• Առևտրի կետերում,</li> <li>• Հեռախոսի միջոցով,</li> <li>• Կանխիկացում ԱԳՄ-ներից, և/կամ</li> <li>• Առցանց գնում(ներ), ներառյալ առցանց հարթակներում փոխանցումները,</li> <li>• Վիրտուալ դրամապանակների լիցքավորում/համալրում:</li> </ul> </li> </ol> <p>Ապահովագրական ընկերությունը Քարտապանին կփոխհատուցի չարտոնված գանձումները (ծախսագրումները) Քարտապանի կողմից Բանկին պատահարի մասին «Ամերիաբանկ» ՓԲԸ Վճարային քարտերի սպասարկման պայմաններ և օգտագործման կանոններ»<sup>4</sup>-ով սահմանված կարգով և եղանակներում հայտնելու պահին նախորդող 2 (երկու) ամիս տևողությամբ ժամանակահատվածի համար:</p>

### 3. Քարտերի զեղծարարության ապահովագրության դրույթներ և պայմաններ

- 3.1. Ապահովադրի կողմից թողարկվող՝ Վարկային գիծ/օվերդրաֆտ ունեցող Քարտերի ապահովագրության հետ կապված ծախսը կրում է Ապահովադիրը, իսկ մնացած Ապահովագրված քարտերի դեպքում՝ Քարտապանը:
- 3.2. Վարկային գիծ/օվերդրաֆտ ունեցող Քարտերի դեպքում ապահովագրությունը գործում է Ապահովագրված քարտով տրամադրված վարկային գծի/օվերդրաֆտի գործողության ողջ ժամկետի ընթացքում, եթե Ապահովագրության պայմանագրի գործողությունը որևէ հիմքով չի դադարում ավելի վաղ, քան վարկային գծի/օվերդրաֆտի գործողության ժամկետը, և դադարում է նշված վարկային պարտավորությունը ցանկացած հիմքով դադարելու պահից: Եթե Ապահովագրության պայմանագրի գործողությունը որևէ հիմքով դադարում է ավելի վաղ, քան վարկային գծի/օվերդրաֆտի գործողության ժամկետը կամ Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրության ժամկետը ավելի կարճ է, քան վարկային գծի/օվերդրաֆտի գործողության ժամկետը, ապա ապահովագրությունը դադարում է Ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարելու կամ Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրության ժամկետը լրանալու պահից:
- 3.3. Պայմանների 2.2.2. կետով սահմանված քարտի ապահովագրությունը գործում է Ապահովագրված քարտի գործողության ողջ ընթացքում՝ Ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետով (ապահովագրությունը լռելյալն շարունակվում է), իսկ եթե Քարտը որևէ հիմքով փակվում է մինչև Ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետը, ապա Քարտի ապահովագրությունը գործում է նշված ավելի կարճ ժամկետով: Սույն կետով սահմանված Քարտերի ապահովագրությունը Հաճախորդի կողմից կարող է դադարեցվել Բանկին այդ մասին նախապես գրավոր ծանուցելով և մարելով Քարտի ապահովագրության հետ կապված Բանկի նկատմամբ ունեցած պարտավորություններն ամբողջությամբ (առկայության պարագայում):
- 3.4. Ապահովադրի կողմից վարկային գիծ/օվերդրաֆտ ունեցող ունեցող Քարտերի ապահովագրության չկատարումը չի կարող դիտվել որպես Ապահովադրի կողմից ստանձնած որևէ պարտավորության խախտում և/կամ դրսևորված անփութություն և չի կարող հանգեցնել որևէ պատասխանատվության, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրված քարտի ապահովագրության հետ կապված ծախսը կրում է Քարտապանը, որի պարագայում Ապահովադրի կողմից ապահովագրության չիրականացումը կհանգեցնի ապահովագրության հետ կապված ծախսի համամասնորեն նվազեցմանը: Ապահովագրական ընկերության կողմից որևէ հիմքով կամ պատճառով հատուցում չտրամադրելու դիմելը կրում է Քարտապանը և ապահովագրական ընկերության կողմից հատուցում չտրամադրելու և/կամ մասնակի տրամադրելու համար Ապահովադիրը որևէ դեպքում որևէ պատասխանատվությունը չի կրում:
- 3.5. Ապահովագրական պայմանագրի ներքո Ապահովադրի պարտավորությունն ապահովագրվում է միայն ներքոնշյալ պայմաններով.
  - 3.5.1. Քարտապանը պետք է պահպանի Ապահովադրի բոլոր այն պայմանները<sup>4</sup>, որոնց համաձայն թողարկվում է (են) Ապահովագրված քարտ(եր)ը:
  - 3.5.2. Ապահովագրողը փոխհատուցելու է միայն այն չարտոնված գանձումների (ծախսագրումների) դեպքերը, որոնց մասով պատասխանատվությունը կրում է Քարտապանը համաձայն «Ամերիաբանկ» ՓԲԸ Վճարային քարտերի սպասարկման պայմաններ և օգտագործման կանոններ»<sup>4</sup> -ի:
  - 3.5.3. Քարտապանն Ապահովադրին պետք է ներկայացնի ապացույց առ այն, որ Քարտապանի Քարտային հաշվով չարտոնված գանձումներ (ծախսագրումներ) են կատարվել:
  - 3.5.4. Ապահովագրական ծածկույթը կիրառվում է գործող և պատշաճ կերպով սպասարկվող քարտային հաշվի նկատմամբ: Ապահովագրական հատուցում չի վճարվի, եթե պատահարի օրվա դրությամբ Քարտապանն

<sup>4</sup> «Ամերիաբանկ» ՓԲԸ Վճարային քարտերի սպասարկման պայմաններ և օգտագործման կանոններ» /11RBD/12CIB RL 72-01-03/, ընդունվել է Բանկի Տնօրինության 08.07.2015թ. թիվ 03/17/15 որոշմամբ. <https://ameriabank.am/useful-links>:

ունի Ապահովադրի նկատմամբ ժամկետանց պարտավորություններ, առկա է բռնագանձում քարտային հաշվին առկա միջոցների նկատմամբ կամ քարտային հաշիվը չեղարկման ընթացքում է:

- 3.5.5. Ապահովագրական ծածկույթը ենթակա է չեղյալացման վնաս կրելու պահին կամ դրանից հետո, եթե բացահայտվի, որ Քարտապանը միտումնավոր թաքցրել կամ խեղաթյուրել է սույն ապահովագրությանն առնչվող որևէ էական փաստ կամ հանգամանք կամ կեղծ տեղեկություններ է տրամադրել Ապահովագրողին:
- 3.5.6. Վնաս կրելու պահին և դրանից հետո Քարտապանը պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները՝ հետագա վնասներից խուսափելու համար:
- 3.5.7. Ապահովագրության պայմանագրի ներքո Ապահովագրողի կողմից փոխհատուցում տրամադրելու դեպքում ապահովագրական պատահարի արդյունքում ծագած պահանջի իրավունքը, որը Քարտապանն ունի երրորդ անձի կամ անձանց նկատմամբ, անցնում է Ապահովագրողին, և Քարտապանը պետք է լրացնի, ստորագրի և ներկայացնի նման իրավունքների ապահովման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը: Ապահովագրական պատահարից հետո Քարտապանը չպետք է կատարի որևէ գործողություն, որը կարող է խոչընդոտել սուբրոգացիայի իրավունքի փոխանցմանը:
- 3.5.8. Եթե ցանկացած դատական կամ այլ վարույթի ընթացքում Ապահովագրողը պնդի, որ, կիրառելի բացառություններով պայմանավորված, Քարտապանի կրած վնասը ենթակա չէ հատուցման սույն Ապահովագրական պայմանագրի համաձայն, ապա հակառակն ապացուցելը Քարտապանի խնդիրն է:
- 3.5.9. Ապահովագրական ծածկույթի յուրաքանչյուր տեսակի մասով, առանձին կամ ընդհանուր ներկայացված հայտերի քանակից անկախ, Ապահովագրողը յուրաքանչյուր քարտի գծով վճարելու է առավելագույնը սույն Պայմաններում նշված մեկ քարտի համար սահմանված՝ մեկ պատահարի գծով և ընդհանուր տարեկան սահմանաչափերը չգերազանցող գումար:
- 3.5.10. Սույն Պայմաններում նշված ապահովագրական ծածկույթը լրացուցիչ բնույթ է կրում: Այսինքն, եթե ապահովագրական պատահարի գրանցման պահին Քարտապանն ունի նաև այլ գործող և տվյալ դեպքի հանդեպ կիրառելի ապահովագրություն, օրինակ, բայց ոչ միայն, անշարժ գույքի, կահույքի/սարքավորումների, վարձակալության, առողջության, ճանապարհորդության մեջ գտնվող անձանց աջակցության ապահովագրություն, ապահովագրություն դժբախտ պատահարներից կամ առողջության ապահովագրություն, ապա Ապահովագրության պայմանագրով փոխհատուցման ենթակա է միայն թվարկված ապահովագրության տեսակների ծածկույթով չնախատեսված գումարը, ըստ սույն Պայմաններով նշված ապահովագրական ծածկույթի սահմանաչափերի:
- 3.5.11. Ապահովագրողը պարտավորվում է փոխհատուցում վճարել սույն Պայմանների ներքո միայն Պայմանների բոլոր բաժիններով սահմանված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում:

#### **4. Բացառություններ (ապահովագրության պայմանագրով չծածկվող/չհատուցվող գանձումներ և դեպքեր)**

Սույն Պայմանների և Ապահովագրության պայմանագրի համաձայն չեն փոխհատուցվում հետևյալ ծախսերը.

- 4.1. «Ապահովագրական ծածկույթ» բաժնում չներառված գանձումներ (ծախսագրումներ),
- 4.2. Լրացուցիչ վնասներ, որոնք առաջանում են Պայմանների 2.3. կետի Ապահովագրական պայմաններով սահմանված պարտավորությունները Քարտապանի կողմից չկատարելու հետևանքով,
- 4.3. Կորած կամ գողացված Ապահովագրված քարտով իրականացված չարտոնված գանձումներ (ծախսագրումներ)՝ Քարտապանի կողմից Բանկին պատահարի մասին հայտնելու պահին նախորդող 48 ժամը գերազանցող ժամանակահատվածի համար,
- 4.4. Չարտոնված կանխիկացում ԱԳՄ-ներից, որը տեղի է ունեցել Քարտապանի կողմից Բանկին պատահարի մասին հայտնելու պահին նախորդող 2 (երկու) ամիսը գերազանցող ժամանակահատվածի համար,

- 4.5. Ապահովագրված քարտով իրականացված չարտոնված գանձումներ (ծախսագրումներ), եթե Քարտապանի Ապահովագրված քարտը չի կորել կամ գողացվել, Քարտապանի կողմից Բանկին պատահարի մասին հայտնելու պահին նախորդող 2 (երկու) ամիսը գերազանցող ժամանակահատվածի համար,
- 4.6. Քարտապանի ընտանիքի անդամի կողմից կատարված ծախսեր,
- 4.7. Ապահովագրական պայմանագրի գործողության ժամկետից դուրս առաջացած վնասներ,
- 4.8. Բիզնես գործունեության, այդ թվում՝ Քարտապանի աշխատանքի առնչությամբ առաջացող վնասներ,
- 4.9. Վնասներ, որոնք առաջանում են Քարտապանի ապօրինի գործողությունների հետևանքով,
- 4.10. Քարտապանի միտումնավոր գործողությունների հետևանքով առաջացող վնասներ,
- 4.11. Վնասներ, որոնք առաջանում են Ընտանիքի անդամի միտումնավոր գործողություններից կամ այնպիսի գործողություններից, որոնք հայտնի էին Ընտանիքի անդամին կամ ծրագրվել էին նրա կողմից,
- 4.12. Պատերազմի, ներխուժման, թշնամու հարձակման, ռազմական կամ պատերազմական գործողությունների (անկախ նրանից՝ պատերազմ հայտարարվել է, թե ոչ), քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության, խռովության, հեղաշրջման, ռազմական կամ իշխանության ուզուրպագման, ռազմական դրություն հայտարարելու, ահաբեկչության կամ անօրինականորեն ձևավորված ցանկացած իշխանության դրսևորման կամ ցանկացած բնույթի բարբարոսական արարքի հետևանքով առաջացած վնասներ: Նման բացառությունը կիրառելի չէ գործադուլների, բախումների և/կամ քաղաքացիական խռովությունների, ինչպես նաև պատերազմի, ռազմական և/կամ ահաբեկչական գործողությունների հետևանքով առաջացած վնասների դեպքում,
- 4.13. Վնասներ, որոնք առաջանում են կառավարության, որևէ պետական կամ մաքսային մարմնի կողմից ընդունված հրամանի հետևանքով,
- 4.14. Ապահովադրի բազմաթիվ (Ապահովագրության պայմանագրով Բանկի կողմից ապահովագրված քարտերի ընդհանուր թվի 1%-ից ավելի) Քարտապանների կրած վնասները, որոնք առաջացել են ֆինանսական հաստատությունների, մեծածախ և մանրածախ առևտրի կենտրոնների կամ վճարային համակարգի ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերահսկողության և պատասխանատվության ներքո գտնվող և/կամ համապատասխան կորպորատիվ ապահովագրությամբ ապահովված ցանկացած տվյալների և/կամ տվյալների բազաների և/կամ տվյալների պահպանման այլ միջոցների հանդեպ վնասաբեր համակարգչային ծրագրի կիրառման, գողության, չարաշահման, սխալ օգտագործման և/կամ տվյալների կորսման հետևանքով:

**5. Ապահովագրական հատուցման պահանջի ներկայացման և ապահովագրական հատուցման կարգը**

- 5.1. Քարտապանը պարտավոր է տեղի ունեցած պատահարի մասին գրավոր ծանուցել Ապահովադրին պատահարի տեղի ունենալու պահից առավելագույնը 20 օրվա ընթացքում, իսկ Քարտապանի Ապահովագրված քարտի կորստի կամ գողության դեպքում՝ պատահարի տեղի ունենալու պահից առավելագույնը 48 ժամվա ընթացքում՝ ներկայացնելով քարտային գործարքի բողոքարկման դիմումը Ապահովադրի կողմից սահմանված ձևանմուշով:
- 5.2. Ապահովադրին իրականացնելու է հատուցման պահանջի ներկայացման գործընթացը համաձայն Ապահովագրության պայմանագրի, որի համար հիմք է հանդիսանում Քարտապանի կողմից լրացված և Ապահովադրին ներկայացված՝ Ապահովադրի կողմից տրամադրված ձևանմուշով քարտային գործարքի բողոքարկման դիմումը: Քարտապանը պարտավոր է ըստ պահանջի ներկայացնել նաև Ոստիկանություն ներկայացված սկզբնական զեկուցագրի պատճենը, առկայության դեպքում, ինչպես նաև ցանկացած այլ փաստաթղթեր, որոնք Ապահովագրողը կարող է պահանջել Քարտապանից և/կամ Ապահովադրից:
- 5.3. Ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է անմիջապես Քարտապանի Ապահովագրված քարտային հաշվին:
- 5.4. Ապահովագրողի ծառայությունից դժգոհ լինելու/բողոք ունենալու դեպքում՝ Քարտապանը կարող է դիմել Ապահովագրողին: Տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային

պահանջի դեպքում Ապահովագրողի և Քարտապանի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

- 5.5. Ապահովագրված քարտ/եր/ի գծով Ապահովագրական հատուցում ստանալու Քարտապանի պահանջի իրավունքը ծագելու պահից, ինչպես նաև Քարտապանի անունով ապահովագրված քարտի գծով Բանկում Քարտապանի գործող հաշվեհամարին փոխանցված ապահովագրական հատուցման գումարը սույն Պայմաններին Քարտապանի կողմից համաձայնություն տալու պահից հանդիսանում են գրավադրված հոգուտ Ապահովադրի՝ ի ապահովումն տվյալ ապահովագրված քարտով Ապահովադրի հանդեպ Քարտապանի ունեցած վարկային և/կամ ցանկացած այլ դրամական պարտավորությունների: Ընդ որում, սույնով Քարտապանը տալիս է իր անվերապահ և անհետկանչելի համաձայնությունն առ այն, որ ապահովագրված քարտի գծով ստացված ապահովագրական հատուցման գումարները, և դրանց պահանջի իրավունքը հոգուտ Ապահովադրի գրավադրված լինելու ուժով կարող են տնօրինվել Ապահովադրի համաձայնությամբ/հայեցողությամբ՝ բացառապես Ապահովագրված քարտով Քարտապանի կողմից Ապահովադրի հանդեպ ստանձնած դրամական պարտավորությունների կատարման ուղղությամբ կամ տրամադրվել Քարտապանին:

## **6. Անձնական տվյալների տրամադրման և օգտագործման կարգը**

- 6.1. Սույն պայմաններին Քարտապանի կողմից համաձայնություն տալու պահից Քարտապանի անհետկանչելի համաձայնությունն առ այն, որ Ապահովադրի Ապահովագրողից ստանա և վերջինիս տրամադրի ապահովագրված քարտի ապահովագրության առնչությամբ քարտի համարի առաջին 9 նիշը, քարտապանի անունը և հասցեն, պատահարի և առնչվող գործարքի մանրամասները, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող ցանկացած տեղեկատվություն /այդ թվում անձնական տվյալներ/, համարվում է տրված:
- 6.2. Ապահովագրողը հանդիսանում է տվյալների վերահսկող մարմին, և Ապահովագրողն ամբողջական պատասխանատվություն է ստանձնում՝ հաճախորդների ինքնության և Ապահովագրողին վստահված անձնական և ՀՀ օրենսդրության համաձայն գաղտնիք կազմող ցանկացած այլ տեղեկատվության գաղտնիությունն ու անվտանգությունն ապահովելու համար:
- 6.3. Սույն փաստաթղթի իմաստով «Անձնական տեղեկատվություն/տվյալներ» նշանակում է ցանկացած տեղեկատվություն, որը նույնականացնում է անհատին և ներառում է ցանկացած գաղտնի անձնական տեղեկատվություն (օր.՝ տեղեկատվություն առողջական վիճակի մասին): Անձնական տվյալներ հասկացությունները ներառում են նաև ցանկացած տեղեկատվություն, որը նույնականացնում է մեկ այլ անձի, ում վերաբերող տեղեկատվությունը Ապահովագրողին է տրամադրվել անմիջապես Քարտապանի կամ Քարտապանի կողմից Ապահովադրի միջոցով:
- 6.4. Քարտապանի և վերջինիս կողմից տրամադրված անձնական տվյալներն Ապահովագրողի կողմից օգտագործվելու են ապահովագրական ծառայություններ մատուցելու համար: Տրամադրվելով Անձնական տվյալները և սույն Պայմաններին համաձայնություն տալով՝ Քարտապանը համաձայնում է, որ դրանք օգտագործվեն Ապահովագրողի, Ապահովագրողի խմբի ընկերությունների, վերաապահովագրողների, Ապահովագրողի ծառայություններ մատուցողների/գործընկերների և գործակալների կողմից՝ ադմինիստրատիվ գործառնությունների իրականացման, հաճախորդների սպասարկման, վեճերի քննության, օժանդակ ծառայությունների տրամադրման, հաճախորդների դասակարգման և Ապահովագրողի գործառնությունների կառավարման ու աուդիտի նպատակներով: Ապահովագրողը կարող է նաև փոխանցել Քարտապանի անձնական տվյալներն այլ ապահովագրողներին, կարգավորող և իրավապահ մարմիններին՝ խարդախությունների և ֆինանսական հանցագործությունների կանխարգելման նպատակով, ինչպես նաև օրենքով պահանջվող մնացած բոլոր դեպքերում կիրառելի օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 6.5. Եթե Քարտապանից այլ հրահանգ չստանա Ապահովագրողը, ապա վերջինս կարող է կապ հաստատել Քարտապանի հետ՝ տեղեկացնելու համար այն ապրանքների, ծառայությունների կամ հատուկ առաջարկների մասին, որոնք կարող են հետաքրքրել Քարտապանին: Եթե Քարտապանը չի ցանկանում ստանալ Ապահովագրողի գովազդային նյութերը, կարող է դիմել Ապահովագրողին:

